

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԻՑ ԵՎ ՏՊԱՎ ՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Մենք Գալիքորնիու պատգամավորներս
էջմիածին զալու և Հայրենիքը տեսնելու
բառն ցանկությամբ մտանք Սովետական
ինքնաթիռ մը 29 մայիսի 1945 թ.։

Ասավում ժամը 2-ին ինքնաթիռու միասի
վեր բարձրանալ, Ճամբորդներս՝ երեք ենք
միայն, երեք հայ, իսկ օդանավիք պաշտոն-
յաները՝ ութը, երեքը ամենիկացի և հինգը
ուսու, հարամանատար Ռուլէկոյի դիմավորու-
թյամբ։

Հիացումի մատնված ենք ոչ միայն ա-
նոր համար, որ կուրանք երկնքեն, կար-
ծես եղիայի նման չքաղեն կառուք, այլ կը-
հիանանք անով, որ օդանավիք միայն մեր
տրամադրության տակ դրված է և առանց
վճարումի։

Արդարեն, զարմանավիք աշխարհ մըն է,
որ կտրեցինք օգեն, և այս տասը օր : Տե-
սանք հեղասահ Փերեր, ամսամերձ անտառ-
ներ, զալարազեղ հովիտներ, ծաղկապիտ սա-
րեր և արեւու երկինք : Սիսիրիան մեր մեջ
որպես հին աքսորաբայր սոսկում միայն դը-
րոշմեր էր և այս հին օրերում էր, իսկ հի-
մա կարծես մեր Գալիքորնիու Սեն Վոքի
հովիտը լինեինք և կամ Սիրա Նեփատա
լեռներէ վեր : Ձե՞ս որ զարուն է այսօր և
ան ալ Սովետական դարուն :

Հիացում պատճառնց մեզ նաև բարեկիրթ
վերաբերունքը օդանավորդներուն . կար-
ծես հինավորոց բարեկամներ լինեինք կամ
հարազատ եղայրայներ :

Չուեցինք Ալասդային Սիրիաիա, Ռունց,
Սերմչան, Եսուություք, Նիշո-Ինդիոք, Գրադ-
նոյեսք, Օմսք, Կարան, Մոսկվա և Թբիլի-
սի : Ուր որ իջևանեցանք, նույն ջերմիկ
վերաբերունքը դասնք մեղ հյուրասիրող-
ներու մոտ : Ամենուրեք հարդանք, առաս
ճաշ, հանդստավիտ անկողին, ամեն բան
պատրաստ էր մեղ համար :

Ամենափոքրիկ կայսեններու մեջ անդամ
մեղ դիմավորողներ ունեցանք, որոնց մեջ
կար անդիմախոս մեկը, օրիորդ մը Սովետ
համարաբաններէ շրջանավարտ : Նորատիպ
առաքելուհիներ, լուսավորիչներ ազգերու
եղբայրության :

Այս, երեկի ցրտաշունչ Սիրիաը դարձեր

է եղբայրության վառարան, իրարամերժ
եղեկը եղբայրացեր և սիրու հոգվով շաղ-
կապիկը ևն իրարու հետ : Շիտակն ասած,
մենք ալ կերպով մը նույնացանք նրանց
հետ, այլևս, երբեք չփորձեցանք հարցնել,
թե ո՞ւր կրտնվինք կամ մեղ հյուլնկալուդ-
ները ի՞նչ ցեղի կապատկանին, կարծես ա-
մենքն ալ հայեր լինեին :

Անգամ մը մեղ վեմավորող օրիորդին
հարցուցի : «Օրիորդ, այս քաղաքը քու
ծննդավա՞լլրէ է»:

— Ոչ, — պատասխանեց, — իմ ծննդա-
վայրս Քիեվն է, բայց սա ալ իմ երկիրն
է, չէ՞ս որ այս երկիր երիտասարդներն ալ
հերոսարար կովեցան և իրենց կյանքի գր-
նով պաշտպանեցին իմ Քիեվը...» : Եթե
կրտնական մը չլինել և եթե վաթուն տա-
րու մի մարդ չլինել, թույլատրվեր ինձ,
ես ճակատը կհամբաւիրեի այդ օրիորդին :

Քենթըրպերի ամայտ երեցին «Սովետ Խ-
խանություն» անուն վերքը վարդացեր էր :
Որուն հետեւով հարցուցի օրիորդի մը
«Թե արդարեն այժմ կմշակիլի՞ն Սիրիաիու
մեջ հացահատիկներ, որոնց արմատը չփշա-
նար և երեք տարի պարբերաբար ցորեն կար-
տաղրեր : Թե արդարել օգեն պարարտու-
թյուն կստացվի՞ բոլորու համար : Թե ար-
դարեն զունավոր քամբակներ կարտաղրե՞
Սովետ հողը» :

— Այս, ըսակ օրիորդը, Սովետ միտքը
կփորձե և կհաջողի բնության ուժերը
սանձել :

Զարմանքով հետեւցանք նաև այն երե-
վութին, որ մեր ճամբորդության օրերեն
մեկը տեսեց լման քառասունութը ժամ, ա-
ռանց դիշերի, առանց խավարի : Մեր մոտ
ամենեն երկար ցորեկն անդամ ժամը ինին
կրեցանար խավարով, մինչդեռ հս ժամը
12-ին դեռ արել մարք չէր ժամած, մեկն
երկուք, վերջալույսը համբուրուեցալ ար-
շալույսին հետ և դարձյալ նոր օր, նոր
արեւ : Եվ սա զարնանային եղանակի բնա-
կան մի երեւութ էր, սակայն մենք համոզ-
վեցանք, որ Սովետ գույներն են անկեղծ
և լույսն ու արել անմար ...»

Սովետ Հանրապետությանց մեկուն մայ-

րաքաղաքն ենք. առաջնորդվեցանք մի փարկ: Հոն մշտաղալար ծառերու չուբեն շարպած են Սովետ հերոսներու մեծադիր պատկերները: Հոն են Ստալին, Մոլոտով, Կոնկ և ուրիշներ, Հոն է նաև Հայազգի Միկոյան: Ո՞րքան հպարտ էինք, որ Հայն ալ ազատ ազգերու կարգին իր պատվագոր տեղն է գրաված, և աս Սովետ Միության եղբայրության ընորդիվ:

Երկու օր մասցինք Մոսկվա, Հրաշքներու նոր քաղաքը: Զէինք կշտանարդիտելի Գորկիի ու Հոկտեմբերյան պողոտան: Նեշնտլն ու Մոսկվա օթելները, Հաղթական աշտարակներու երկնաշող աստղերն ու Կարմիր Հրապարակը: Ոտքով չորս անդամ շրջեցինք կրեմլի շուրջ, Լենինի դամբարանի մոտեն, չունչ առինք Հոկտեմբերյան պարտեզի ծառերուն տակ, ուր Հին օրերու ճահճուտին մեջ ժամանակավ մժղուկներ միայն կվայտային, այժմ անիկա բուրաստանի է վերածված:

Մատանք կիմո և մեթրո. ամեն կողմ հիայում: «Մեր այս մեթրոն (գեանուղին), ըսավ անզիւխտոս օրիորդ մը, մեր մայրաքաղաքի բնակչության փրկարարն եղավ. թշնամի ուռմբերու տարափին տակ հոս է, որ ապավինացան քաղաքի մանուկներն ու անկարները և ապահով դրացին վատանդներե»: «Այս գետնուղին, չարունակեց օրիորդը, սուրբ է մեղի Համար նաև անոր Համար, որ պատերազմի երկունքին մեջ զայն կառուցինք մեր արյան զնովի»: Որևէ երկիր, կիսործինք, չերնար ուռմբերու տակ այսքան հոյակապ կառուցվածք կերտել, ուրիշ երկիր մը նմանօրինակ պարագաներու տակ թերեւ խուճապի մատնիիր: Փա՛ռք մեր մոքի և բաղուկի հերոսներուն:

Հոն այցելեցինք կուլտուրայի փարկը, ընդարձակ ապրածությամբ գետին մը, ուր լեռնանման դիզված են Հիթերի բանակներ գրաված ուղմամթերքներ, թնդանոթներ, Հրանոթներ, դանաղան ձեւի և զանազան մեծությունիք, ուռմբեր՝ մեծ ու պրտիկ, թենքեր՝ աշարկու կազմով, զանազան ձեւի սավառնակներ, զարմանահրաշ գործիքներ՝ դաժան ու մահամափուռ, թթացած մետաղներ՝ ամեն աստիճանի հաստուկ: Պաշտա՞նք Սովետ զորության, որ աշխարհը փրկեց այլ սոսկատեսիլ մահամափան երախեն:

Հրավիրվեցանք ՄՈՒՄ կառավարության կրոնից Խորհրդի սենյակը: Խորհրդի նախագահ Պոլյանսկին այլ օր Երևան մեկներ էր: Մեղ ընդունեց փոխնախադաշտը: Մեղ

հանդեպ ցույց տվավ սիրալիր վերաբեր մունք: Հետաքրքրվեցավ Ամերիկահայ եկեղեցական խնդիրներով, ապա սեղանի մը զեցական խնդիրներով, ապա սեղանի մը շուրջ բարեմաղթություններ ըրինք Սովետ Միության հաղթանակի և ժողովուրդներու բարօրության, եկեղեցիներու պայծառացման ուղղյալ:

Միրել եղավ մեղ այցելել նաև Հայ կուլտուրայի Տունը, չին Լազարյան շենքին մեջ: Այս նվիրական հաստատությունը, որ ժամանակին մեծ ծառայություն մատուցած էր Հայ մտքին, այժմ դարձյալ Հայ մտավորականներու ձեռքին մեջ կհանդիսանալ լուսով վատարան մը:

Թրիփիսին մեջ հիմնակության արժանի բան մը պատահեցավ: Ինքնաշարժով նուրբեն Տիգրանյանի եղբոր տունը փնտուելու ատեն դրամապանակս կորցուցած եմ: Մեծ մահողություն մըն էր ինձ համար, որովհետո ոչ միայն լան զանձան կորցուցեր էի, այլև անձնագիրս, որով ինձի հար այլևս Ամերիկա վերապանալու, հույս չկար: Ես այս մտածումներու օվկյանին մեջ կտարութերեի, երբ ինքնաշարժի վարժը ներս մտավ և ըսավ. «Պարոն, կարծեմ այս զրամապանակը Զերը ըլլալու է, ինդիքն նայեցեք մեջնեն բան մը պակաս չըլլա...»: Ըսեք խնդրեմ, ինչի՞ վերադրել այս ուղղածությունը:

Եվ այս բոլորեն վերջ մեր մեջ մեր սրբած կրծող բաղդամք մը կար: Հայաստան աշխարհը կուղեինք տեսնել, Հայրենի հողը կուղեինք համբուրել: Պատնել, Համբուրել Հայրենի հողը, ուխտն էր այս մեր նվիրական, ուխտը ոչ միայն մեր բանտի, հաւածանքի և արցունքի օրեթուն, այլև ուխտը այն անմուրազ հողիներուն, որ միլիոններով ցանեցինք անապատի պամաներուն մեջ անհաց և անշիրիմ, Տեր Զորեն—Մատն, Եփրատն—Կարմիր ծով...»:

Անմուրազ հողիներ, ողջույն ձեզ, ողոք մեռած չէք, Հայաստան ողջ է: Եվ ողոք պանդուխտ, վտարանդի Հայեր, ցնծացե՛ք մեղի հետ, տեսե՛ք, ամսեր փարատեր են, տեսե՛ք Ալեփառ Մասիսը կառագունի...»:

Մայր Արաքսը իր արցունքը թափեց Մայր Վորդայի մեջ: Ողջույն, Հայեր, ողջույն ձեզ, Մայր Հայաստան դրկարաց, Համատացե՛ք, պիտի լողունի ձեզ:

Կ. Քահ. ԳԱԱՖԱՅԱՆ
(Գալիֆորնիա պատգամավոր և նդեմի հովին)